ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2017 թվականի N 88

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջներով, համաձայն Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 42 որոշման և Աշոտ Մելքումյանի դիմումի՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 1 փողոց N 109 հասցում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.09713 հա հողամասի ընդլայնման համար ուղղակի վաճառքով Աշոտ Գուրգենի Մելքումյանին օտարվող 1-ին փողոց N 109/1 հասցեում գտնվող համայնքային սեփականության 0026-0052 ծածկագրի 0.02566 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր:
2. Աշոտ Մելքումյանին՝ հողամասի կադաստրային գնի չափով՝ 318700 /երեք հարյուր տասնութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ գումար վճարել համայնքի բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 28

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2017 թվականի N 89

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Մելքումյանին սեփականության իրավունքով պատկանող 0026-0002 ծածկագրի (վկայական N 14072017-07-0062, 0.09713 հա) և 0026-0052 ծածկագրի 0.02566 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել միասնական 1-ին փողոց N 109 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 28

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2017 թվականի N 90

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Արթուր Բաբայանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2017 թվականի 4-րդ եռամսյակի՝ հոկտեմբերի 01-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
2. Անհատ ձեռնարկատեր Վարազդատ Հովհաննիսյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2017 թվականի 4-րդ եռամսյակի՝ հոկտեմբերի 01-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
3. Անհատ ձեռնարկատեր Քրիստինե Գրիգորյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2017 թվականի 4-րդ եռամսյակի՝ հոկտեմբերի 01-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 01-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 29

գ. Նոր Արտամետ